COVERED CALIFORNIA

Մենք ունենք ձեզ համար ծրագիր և ձեր աջակցությունը:

Քայլ առ քայլ ուղեցույց

Հանուն կալիֆոռնիացիների

Առողջապահական ծրագրեր կալիֆոռնիացիների համար: Կալիֆոռնիացիների կողմից:

Covered California-ն առողջության ապահովագրական ընկերություն չէ: Մենք օգնում ենք, որպեսզի կալիֆոռնիացիների համար առողջապահությունը լինի ավելի պարզ, արդար և մատչելի: Մենք օգում ենք ձեզ համեմատել ապահովագրական ծրագրերը, ստանալ ֆինանսական աջակցություն և գրանցվել հայտնի ապահովագրական ծրագրերում: Անդամների մեծ մասը ստանում է ֆինանսական աջակցություն՝ ամսական ապահովագրավճարը նվազեցնելու համար, և բոլորին երաշխավորվում է նույն բարձրորակ ապահովագրական ծածկույթը: Մենք ձեր կողքին ենք: Մենք պայքարում ենք ձեզ համար: Որովհետև մենք ենք ձեր ձայնը:

Առողջապահություն՝ առանց «Ըը՞»-ի

Մենք լավ ենք հասկանում առողջապահությունը: Անդամագրման ընթացքում օգնության համար զանգահարեք 800-996-1009 (հայերեն) կամ այցելեք **CoveredCA.com**: Մենք անվճար, մասնագիտացված օգնություն ենք առաջարկում առցանց, անձամբ և հեռախոսով բազմաթիվ լեզուներով, նաև լսողության դժվարություններ ունեցող անձանց համար:

ՔԱՅԼ ՄԵԿ

Տեսեք արդյոք համապատասխանում եք բժշկական ապահովագրություն ստանալու պահանջներին:

Գրանցվածների մոտավորապես 5-ից 4-ը ստանում են ֆինանսական օգնություն՝ իրենց ամսական վճարը նվազեցնելու համար: Ֆինանսական օգնության չափը կախված է ձեր ընտանիքի եկամտից, ընտանիքի չափից և ձեր բնակության վայրից:

Ստուգելու համար թե դուք որակավորվում եք ֆինանսական օգնության համար, սկանավորեք QR կոդը, կամ այցելեք CoveredCA.com

COVERED CALIFORNIA

Հանուն կալիֆոռնիացիների

ՔԱՅԼ ԵՐԿՈՒ

Բացահայտեք ձեր հատուցման ընտրանքները

Covered California-ն առաջարկում է ապահովագրության չորս աստիճան՝ հայտնի որպես բրոնզ, արծաթ, ոսկի և պլատին: Ապահովագրական ընկերությունները վճարում են ապահովագրված ծառայությունների մի մասը, և յուրաքանչյուր աստիճանում առաջարկվող առավելությունները նույնն են՝ անկախ ապահովագրական ընկերության ընտրությունից:

Ընտրեք **Պլատին** կամ **Ոսկի**, և դուք կվճարեք ավելի բարձր ամսավճար, բայց ավելի քիչ կվճարեք բժշկական ծառայությունների համար, երբ դրանք անհրաժեշտ լինեն:

Ընտրեք **Արծաթ** կամ **Բրոնզ** և դուք կվճարեք ավելի ցածր ամսավճար, բայց ավելի շատ կվճարեք բժշկական ծառայությունների համար, երբ դրանք անհրաժեշտ լինեն:

Նվազագույն ապահովագրության ծրագիրը հասանելի է մինչև 30 տարեկան անձանց համար կամ 30-ից բարձր այն անձանց համար, ովքեր Covered California-ից կարիքավորության բացառություն են ստացել:

Այցելեք **CoveredCA.com** և ընտրեք «**Shop and Compare**»՝ տեսնելու համար, թե որ ճանաչված բժշկական ապահովագրական ծրագրերն են ձեզ հարմար:

Հանուն կալիֆոռնիացիների

2027 Ստանդարտ բժշկական ապահովագրության օգուտները ըստ նպաստները metal tier դասակարգման համաձայն

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	**ԲՐՈՆԶ** Հատուցում է միջին տարեկան արժեքի 60%-ը	**ԱՐԾԱԹ (CSR)** Հատուցում է միջին տարեկան արժեքի առնվազն 70%-ը[1]	**ՈՍԿԻ** Հատուցում է միջին տարեկան արժեքի 80%-ը	**ՊԼԱՏԻՆ** Հատուցում է միջին տարեկան արժեքի 90%-ը
Անհատական / ընտանեկան նվազավճար	$5,800/$11,600	$4,700/$9,400	Նվազավճար չկա	Նվազավճար չկա
Տարեկան կանխարգելիչ խնամքի այց	Առանց վճարի	Առանց վճարի	Առանց վճարի	Առանց վճարի
Առաջնային խնամքի այցի համավճար	$60	$50	$40	$20
Շտապ օգնության այցելության համավճար	$60	$50	$40	$20
Շտապ օգնության բաժանմունքի վճարում	40%[2]	$400	$350	$225
Ոչ բրենդային դեղերի համավճար	$20	$20	$19	$10
Մեկ անձի տարեկան մաքսիմալ ծախսը	$11,650/տարի	$11,650/տարի	$9,600/տարի	$5,500/տարի
Ընտանիքի տարեկան մաքսիմալ ծախսը[1]	$23,000/տարի	$23,000/տարի	$19,200/տարի	$11,000/տարի

Սկսելու համար այցելեք CoveredCA.com կայքը կամ զանգահարեք՝ 800-996-1009 (հայերեն):

Աղյուսակը չի ներառում բոլոր բժշկական համավճարների և համասապահովագրության չափերը: Ամբողջական տեղեկատվության համար այցելեք CoveredCA.com:

1. Արծաթը միակ մակարդակն է, որտեղ ձեր ծախսերը կարող են ավելի ցածր լինել՝ ելնելով ձեր ընտանիքի եկամուտից: Այս ծրագրերը նաև կոչվում են Ընդլայնված Արծաթե Ծրագրեր:
2. 40% նվազավճարից հետո, մինչև տարեկան գրապնի ծախսերի առավելագույնը սահմանաչափը:

COVERED CALIFORNIA

Հանուն կալիֆոռնիացիների

ՔԱՅԼ ԵՐԵՔ

Ինչ է հարկավոր անդամագրվելու համար

Այս բժշկական ապահովագրությանը դիմելու համար յուրաքանչյուր ընտանիքի անդամի անհրաժեշտ է հետևյալը.

- Տան փոստային ինդեքս
- Ծննդյան թվական
- Ընտանիքի ընթացիկ եկամտի ապացույց[1]
- Կալիֆորնիայի ID կամ վարորդական իրավունք
- Սոցիալական քարտի համար կամ հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ), եթե ունեք
- Քաղաքացիության կամ օրինական ներկայության ապացույց (օրինակ՝ ԱՄՆ անձնագիր, քաղաքացիության վկայական կամ բնականացման փաստաթուղթ, գրին քարտ կամ վավեր վիզա)[2]

Ինձնից պահանջվո՞ւմ է արդյոք ունենալ առողջապահական ապոհովագրություն

Կալիֆորնիայում մարդկանց մեծամասնությունից օրենքով պահանջվում է ունենալ բժշկական ապահովագրություն կամ վճարել հարկային տույժ: Այցելեք Franchise Tax Board–ի կայքը www.ftb.ca.gov, որպեսզի գնահատեք անհատական համատեղ պատասխանատվության տույժը, որը Դուք կարող եք կրել եթե չունենք առողջության ապահովագրություն կամ որակավորվում եք բացառության համար:

ԱՊԿ. ՆՄԿ. ԲՄԿ.

ՄԵՆՔ ԿՕԳՆԵՆՔ ՁԵԶ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՅՍ ԱՄԵՆԸ

Ապահովագրական ընկերությունների մեծ մասն առաջարկում են երեք տեսակի ծրագրեր

ԱՊԿ-ներ, Առողջության Պահպանման Կազմակերպություններ, հատուցում են միայն բժշկական ծառայությունները ծրագրի ցանցի ներսում: ԱՊԿ- ները հաճախ պահանջում են անդամներից ստանալ ուղեգիր իրենց առաջնային խնամքի բժշկի կողմից մասնագետի մոտ այցելելու համար:

ՆՄԿ-ներ, Նախընտրելի Մատակարար Կազմակերպություններ, վճարում են բժշկական ծառայությունների համար ծրագրի ցանցի և՛ ներսում և՛ դրանից դուրս, սակայն անդամները վճարում են ցանցից դուրս խնամքի ծախսերի ավելի մեծ գումար: Մասնագետին այցելելու համար ուղղեգիր չի պահանջվում:

ԲՄԿ-ներ, Բացառիկ Մատակարար Կազմակերպություններ, հիմնականում չեն վճարում ծրագրի ցանցից դուրս խնամքի համար, բայց անդամները կարիք չունեն ուղղեգրի ցանցի ներսում մասնագետին այցելելու համար:

Կարևոր է նշել, որ ոչ բոլոր ԱՊԿ, ՆՄԿ, ԲՄԿ-ներն են նույնը. Նախքան ծրագիր ընտրելը, սեղմեք «**Shop and Compare**» **CoveredCA.com**- ում ՝ մանրամասներ ստանալու համար, թե որ բժիշկներին և հիվանդանոցներին դիմելն է հատուցվում և ինչ կարժենա բժշկին այցելելը ցանցից դուրս:

ՔԱՅԼ ՉՈՐՍ

Ստեղծեք հաշիվ և անդամագրվեք

Անդամագրվեք ծրագրին **CoveredCA.com** կայքում: Պարզապես ստեղծեք օգտատիրոջ հաշիվ և հետևեք անդամագրման գործընթացին ՝ երրորդ քայլում տրված տեղեկության միջոցով:

ՔԱՅԼ ՀԻՆԳ

Վճարեք ձեր ամսավճարը

Վճարեք ձեր ամսական վճարը ամբողջությամբ և ժամանակին՝ ապահովելու համար շարունակական ապահովագրություն: Ամսավճարը չկատարելու դեպքում կարող է խափանվել կամ նույնիսկ չեղյալ համարվել ձեր բժշկական ապահովագրությունը:

COVERED CALIFORNIA

ԲԱՑ ԳՐԱՆՑՈՒՄ Նոյ.1-Հունվ. 31

MEDI-CAL. Հասանելի ողջ տարվա ընթացքում:

SPECIAL ENROLLMENT. Հասանելի 60 օր կյանքի մեծ մասի իրադարձություններից հետո

Special Enrollment-ը թույլ է տալիս Կալիֆորնիայի բնակիչներին ձեռք բերել ապահովագրութուն կյանքի մեծ մասի կարևոր իրադարձություններից հետո՝ 60 օրվա ընթացքում, ինչպիսիք են բժշկական ապահովագրության կորուստը, տնային տնտեսության չափի փոփոխությունը, կամ դեպի Կալիֆորնիա կամ Կալիֆորնիայի ներսում տեղափոխությունը:

Special Enrollment-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք CoveredCA.com/special-enrollment

Covered California complies with applicable federal civil rights laws and does not discriminate on the basis of race, color, national origin, age, disability, or sex.
1-800-300-1533 (TTY 1-888-889-4500). Atención: Si habla español, tiene a su disposición servicios gratuitos de asistencia lingüística. Llame al 1-800-300-0213 (TTY: 1-888-889-4500).
注意：如果您使用繁體中文，您可以免費獲得語言援助服務。請致電
1-800-300-1533 (TTY 1-888-889-4500).

1. Բոլոր անդամների ընթացիկ հարկային եկամտի ապացույցը, ինչպիսիք են վերջին հարկային հայտարագրերը, W-2, վճարման անդորրագրերը: Ձեր խնամքի ներքո գտնվող անձի եկամուտը պետք է ներառվի միայն այն դեպքում, երբ եկամտի մակարդակը պահանջում է հարկային հայտարարագրի ներկայացում: Հարկատու ընտանիք է համարվում այն անձը, ով հարկեր է ներկայացնում որպես հիմնական հարկատու, իսկ ընտանիքի մյուս անդամները ներկայացված են որպես իր խնամքի ներքո գտնվող անձեր հարկային փաստաթղթում: Եթե դուք հարկեր չեք ներկայացնում, դուք դեռ կարող եք Medi-Cal-ի միջոցով ստանալ անվճար կամ էժան ապահովագրություն:
2. Դուք կարող եք դիմել ձեր իրավասու երեխայի կամ ամուսնու համար նույնիսկ եթե դուք իրավասու չեք:

Ձեզ հետաքրքրող պատասխաններ: Ձեզ անհրաժեշտ ծածկույթ:

Իրապես օգտակար աջակցություն:

COVERED CALIFORNIA

Հանուն կալիֆոռնիացիների

Դուք մարդ եք: Ոչ թե պարզապես ապահովագրավճար:

Որպես Մատչելի Խնամքի Ակտի (ՄԽԱ) մաս, Covered California-ն երաշխավորում է՝

- Առկա առողջական պայմանները չեն կարող խանգարել որևէ մեկին ստանալ բժշկական ապահովագրություն:
- Ձեր ծրագիրը չի կարող չեղարկվել եթե հիվանդանաք կամ վնասվածք ստանաք:
- Բոլոր ծրագրերը ներառում են անվճար կանխարգելիչ խնամք:
- Երիտասարդները կարող են ընդգրկվել իրենց ծնողների ծրագրի մեջ մինչև 26 տարեկան:
- Բոլոր անձնական տեղեկությունները, ներառյալ ներգաղթի/քաղաքացիության կարգավիճակը, գաղտնի են պահվում:

Օգնության համար:

Մենք այստեղ ենք՝ ավելի պարզ ու ուղիղ խոսքի համար, ոչ թե երկիմաստ խոսքի: Եթե ունեք հարցեր կամ անվճար անհատական օգնության կարիք, կապվել.

CoveredCA.com կայք կամ զանգահարել՝ 800-996-1009 (հայերեն):

COVERED CALIFORNIA

Հանուն կալիֆոռնիացիների

D-CCA-XXXXXXXX HYE-1026